

այն եպիսկոպոսը, որ փիլոս է ձգում այնպիսի անհատի ուսերին, որ դառնում է ոչ որպէս ոչխարների վրայ անծը դնող հովիւ, այլ որպէս գայլ օձախ: Թշնամի է հայոց եկեղեցուն այն աշխարհականը, որ մարդկանց առաջ խաչ է հանում կրծքին, սուբը նաշակ է ընդունում տանարի մէջ, սակայն որի բոլոր դործերը հակառակ են Աւետարանի ոգուն:

Իսկ նա, ով այդպիսի կեղծիքները տեսնում է և դարձնում է նրանց նշաւակի աւարկոյ, նա չէ կարող Թշնամի համարուիլ եկեղեցուն, նա նրա բարեկամն է, սրտակից բարեկամը:

Նա չէ եկեղեցու շահերի իսկական պաշտպանը, որ ժպիտը դէմքին՝ համբուրում է եպիսկոպոսի ձեռը, որ առանձին պատուով նրան համարում հաշ է ուտացնում, որ ամենայն կիրակի մի քանի դրօշ է ձգում եկեղեցու գանձանակի մէջ և մի քանի դրօշանոց մոմ է վառում սրբոց պատկերի առաջ:

Նա չէ եկեղեցու Թշնամին, ով աշխատում է ամեն տեսակ զոհաբերութեամբ եկեղեցին պայծառացնել իւր իսկական ոգով, հարստացնել նրան այնպիսի միջոցներով, որ իւր ժողովրդի համար նա միշտ մնայ որպէս լուսատու մայր, և որ երբեմն Թոյլ է տալիս իրան նկատողութիւն անել՝ եկեղեցու շահերին խտորնակ գնացողին:

Մենք գիտենք հայ մարդու, որ ամենուրեք և ամեն ժամ իրան մեծ որդի է հումարել եկեղեցու, որովհետև նա մի անգամ առիթ է ունեցել բռնել կոթն այն ամպիտիանու, որի տակ կանգնած է եղել Հայոց Հայրապետը: Եւ ապա գիտենք մարդու, որ ամենայն ջանք գործադրելով, հարուստներին կտակներ է գրել սուել յօգուտ եկեղեցու, դպրոցների յառաջադիմութեան գործի դարկ է տուել՝ եկեղեցու հովանաւորութեան տակ, նոյն իսկ նիւթեղէն ընծաներով՝ զարդարել է Թէ Էջմիածնի և Թէ այլ եկեղեցիների խորանները, սակայն այդ իսկ մարդը համարուել է եկեղեցու Թշնամի՝ նրա համար, որ նա այդքան բարիք անելուց յետոյ համարժակուել է քննադատութեան ենթարկել եկեղեցու պաշտօնեանների հակակեղեցական արարքները:

Մենք մի անգամ ևս կրկնելով, որ Հայաստանեայց եկեղեցու Թշնամի հայ չկայ, պիտի աւելացնենք, որ այն իւրարանչիւր անհատը, որ կամենում է կրել ժողովրդական, հասարակական, եկեղեցական, գրականական կամ լրագրական գործչի լուծը, նա երբէք չպիտի վախենայ, ոչ էլ նեղանայ իւր գործերը քննադատողներից: Ամեն մի ասպարէզում հանուրի համար գործողի կեանքը պիտի միշտ անբասիր լինի, իսկ սխալմունքն անխուսափելի է: Եւ այդ սխալմունքը, որ կատարուած լինի Թէկուղ անգիտակցորէն՝

հրապարակ հանելուց՝ իսկի չպէտք է նեղանալ:

Գիտակցարար արած սխալը յանցանք է, որ նոյնպէս չի կարելի Թողնել գրուանի տակ: Այդպէս և մեր եկեղեցական պաշտօնեանների այն դործերը, որ վերաբերում են հասարակութեան,—հասարակութեան կողմից էլ քննադատելուց՝ չպիտի վիրաւորուին: Այդպէս քննադատողն երբէք չի կարող եկեղեցու Թշնամի լինել, այլ նրա անկեղծ բարեկամը:

Դ. ՆԵՐՍԷՅ*

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Մարդկութեան դարաստանում փոքրիկ ածու ենք, այն էլ փշերի ու մացառների արանքում մնացած, բայց դեռ կարողանում ենք կուլտուրական ծաղիկներ տալ և կուլտուրական պատուներ տանել:

Տարի չէ անցնում, որ մի նշանաւոր կուլտուրական տօն չողջունենք:

Անցեալ տարի Թէպէտ անցաւ անշուք, բայց կարող էինք մեծ շքով տօնել տառերի գիւտի 1500 և տպագրութեան գործի 400 ամեակները: Դրանցից մի տարի առաջ տօնուեց աւագագոյն լրագրի 40 ամեակը, այսօր էլ ողջունում ենք ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանի 40-րդ տարեդարձը: Բոլորն էլ կուլտուրական, բոլորն էլ հայ անուներ՝ փառքով պատկող տօներ:

Անցեալ տարիների տօներն, ինչպէս ասացինք, միանգամայն անգոյն անցան, այսօր էլ Գէորգեան ձեմարանի տօնը կմնայ գրուանի տակ, որովհետև տօնախմբութեան օրեր չեն, որովհետև, ինչպէս հանուր Եւրոպայի, նոյնպէս և մեր մէջ, ուրախութիւնն առ այժմ վարագուրուած է պատերազմի արիւնոտ քօղերով:

Սակայն առանց տօնահանդէսի ևս մի առանձին բերկրանքով պիտի ողջունել մի մտաւոր հիմնարկութեան այսքան տարուայ գոյութիւնը և ողջունելով հանդերձ պիտի ցանկանալ, որ այն փոքր ինչ կերպարանափոխուի, դրուի բացիոնալ հիմունքների և նրա պատերի մէջ աւանդուի այնպիսի ուսում, գիտութիւն, որոնք գործադրելիս էական կարիք ծածկեն Թէ ժողովրդի, Թէ եկեղեցու մէջ: Այդպէս է եղել նրա հիմնադիր Գէորգ չորրորդ կաթուղիկոսի նպատակը, այդպէս ևս ծրագրուել ամեն մի հայ

*Մարտի միջ ապուղ Կ. Ներսէճ ստորագրութեամբ յօդուածակիրը մեր հին գրողներին է, ուստի մի անգամ ևս յիշեցնում ենք, որ այդ ստորագրութեամբ չվերագրեն օմն Ներսէս Խ. Ներսէսանի (Յղճա գիւղացի) որ «Մարտի հետ ուրիշ առնչութիւն չէ ունեցել ի բաց առեալ այն մասնաւոր յանձնարարութիւնները կատարելուց, որ արուել է նրան՝ Թերթիս խմբագրի կողմից: Հէնց այդ յանձնարարութիւնների համար է նրան տուած խմբագրական տօնը, որն այսուհետև նրա մեռնի պէտք է բնորոշա միանգամայն առ ոչինչ համարել: Ծ. Խ.

դպրոց՝ սկսած Մեծն Մերսուպի օրերից: Գծրախառ-
բար էջմիածնի այդ հիմնարկութիւնը միշտ մի որոշ
հրահանգով չէ ապրել, միշտ անձնաւորութիւնների
աշխարհայեցողութիւնների, — զանազան անուշների
ու վերատեսուչների խաղալիք է եղել դարձած, մինչ-
դեռ հայոց այդ բարձրագոյն հիմնարկութիւնն էր,
որ պիտի ստար և լաւ հայազէտներ, և լաւ եկեղե-
ցականներ և առհասարակ հայ իրականութեանն ըստ
ամենայնի իրազէկ անձնաւորութիւններ:

Ձեռք ժխտում, որ այդպէս զուրս են եկել բո-
լորապատու արժանաւորութիւններով օժտուած մար-
դիկ, սակայն այնքան փորրոսթիւ, որ այդպէսներ էլ
աւելի շուտ իրանց անհատական ընդունակութիւն-
ներին պիտի վերադրել քան նեմարանի ղեկավարների
ու հովանաւորների աշխատանքին:

Տարրական հասկացողութիւն է, որ ամեն մի հիմ-
նարկութիւն, եթէ հիմնուած է ժողովրդի համար,
պիտի ըստ ամենայնի ծառայէ ժողովրդի կարիքնե-
րին՝ ժամանակի և հանդամանքի պահանջների հա-
մաձայն:

Այդպէս առաջնորդուելով, Կէորդեան ձեմարանը
Մասիսի ստորաում կմնայ որպէս մի մշտապատ կան-
թեղ—գիտութեան լոյս սփռող հայոց աշխարհի բո-
լոր անկիւններին և որի պայծառ գոյութեանը նա-
խանձարխնիր և օգտուէտ պիտի հանդիսանայ ամեն
մի հայ:

ՄՈՍԿՈՒՍՅՈՒՆ ԱՆՎԱՅՆԷԼ ԳՈՐԾ

Վարչաւայի մտերբում՝ պատերազմի յաղթանակի լուրը
բնական էր, որ մեծ ուրախութեամբ պիտի համակեր, ոչ
միայն ամբողջ Ռուսաստանին, այլ աշխարհի իւրաքանչիւր
մարդասէր մարդու, որովհետեւ այսօր գերմանացիների պար-
տութիւնն առհասարակ, որպէս գոռ միլիտարիզմի պարտու-
թիւն՝ ուրախացնում է ամեն մի՝ խաղաղութիւնը յարգող
մարդու:

Եւ ուսս զօրքի յաղթութեան լուրն առնելուն պէս,
ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Մոսկուայում ուրախու-
թեան ցոյցերը բռնկուեցին. Մեծածաւալ մայրաքաղաքիս
ամեն անկիւն մի առանձին կերպարանք առաւ. Յնձագին
«ուրախները լսուեցին ամեն փողոցում»:

Մոսկուան—Ռուսիայի նախաթոռ մայրաքաղաքը, ինչպէս
և պէտք է սպասուի, միշտ առաջինն է հանդիսացել, որ
արձագանք է տուել ամեն մի նշանաւոր ձայնի, որ միշտ
ուրախութեան առաջին ուրախակիցն է եղել և տրամու-
թեան առաջին սգաւորը. Մոսկուան, որ զուր չէ Մայր
Ռուսաստանի սիրտը համարում, ուսաց պատմութեան
մէջ ունի շատ փայլուն էջեր, բայց դժբախտաբար սոյն
հոկտեմբերի 10-ն Մոսկուայում թողլ տրուեց մի այնպիսի
խոշոր սխալմունք, որ մեծ ցաւով ու մեծ վշտով համակեց
Մոսկուայի փառքին անկեղծ նախանձախնդիր մարդու սիրտը:

Հոկտ. 10-ն ցոյցեր անող զանազան խմբեր յարձակուե-
ցին գերմանական և աւստրիական հպատակների խանութ-

ների վրայ և ջարդ ու փշուր արին ամենուրեք. Այդ պատ-
կերն այնքան տգեղ էր, որ Մոսկուան յարգողների ու նրան
անկեղծ սիրողների սիրտերը կծկեում էին այն տեսնելով:

Այդ խանութների տէրէրն գերմանացիք և աւստրիացիք
են. Իրանց խանութների գոյութիւնը նրանք պահում էին
ուսս կառավարութեան թոյլտուութեամբ, իսկ խանութնե-
րի մէջ հարիւրաւոր ծառայողները ուսններ են և, ի հարկէ,
ուսսական հպատակներ. Թողնէնք, որ այսօր այդ հարիւ-
րաւոր և հազարաւոր ուսս ծառայողներն իրանց ընտանիք-
ներով մնացին անգործ, մնացին քաղցած, թողնէնք, որ այդ
խանութների տէրերը այն ազգի որդիք են, որի զօրքն ու
թագաւորն այսօր կատաղի թշնամի են, ոչ միայն Ռուսա-
ստանին, այլ ամբողջ կուլտուրական աշխարհին, բայց այս-
տեղ նրանք ընկած են անդէն և ընկած են կառավարու-
թեան թոյլտուութեամբ. Եթէ հարկաւոր էր նրանց պատ-
ժել, ամբողջ բուռնցքներն աւելորդ էին, բաւական էր, որ
մի հասարակ ոստիկան այդ խանութպաններին հրամայէր
հաւարել իրանց փասա-փուսէն և նրանք իսկոյն կէքանային
այտակղց. Իսկ եթէ հարկաւոր էր նիւթապէս վնասել,
դրա միջոցը բոյկոտն է, որ ամենայն խառութեամբ գոր-
ծադրում է իւրաքանչիւր ինքնասէր մարդը:

Իսկ փողոցային աղաղակներով կտրատել խանութների
դռները, կոխկոտել ապրանքները, հայհոյել, գոռալ, գո-
չել բնաւ, բնաւ վայել չէր քաղցրանուն Մոսկուային.

Այդ առիթով ուսս մամուլից աւելի խիստ ցասումն
յայտնեց «Русск. Вѣд.» լրագիրը, այդ վարմունքը հա-
մարելով մեծ խայտառակութիւն Մոսկուայի համար:

Եւ այդ խայտառակութիւնը կատարողներին խիստ յան-
դիմանութիւն արձակեց տեղոյս քաղաքապետը իւր կոչի
մէջ, ի միջի այլոց գրելով, որ ազգային օրհներգն աղօթք
է և, այդպիսի աղօթքն երգելով, անկարգութիւններ անե-
լը սորապղծութիւն է. Ապա քաղաքապետը շատ գեղեցիկ
շեշտել էր, որ նորին Կայսերական Մեծութեան կառա-
վարութիւնը, փառք Աստծոյ, այնքան զօրեղ է, որ ինքը
կարող է պատժել նրանց, որոնք արժանի են պատժի:

Պէտք է յուսալ, որ այսպիսի տգեղ վարմունքն այլևս
չի կրկնուիլ Մոսկուայում, որովհետեւ եթէ Մոսկուան
Ռուսիայի սիրտն է, ցանկալի չէ, որ այդ սիրտը բարբաւէ
վայրենի բնազդներով:

Այլքսանդր II-ի և Պաւլիկիի օրօրանում այդ տեսակ
էքսցէսներն անհանդուրժելի են:

ԼՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՆԴԷՄՆԵՐՈՒՄ

Հայաստանի վերատեսուչները հայաստան մտնե-
լուն պէս, հազիւ շունչ առած, Կ.պօլսից հեռագիր
են ստանում՝ իսկոյն վերադառնալ այդտեղից:

Ահա թէ ինչ ենք կարդում Վանում հրատարակ-
ուող «Աշխատանք» թերթում՝ օգոստ. 29-ն համար.

Անցեալ շաբաթ օրկառավարութիւնը, նախապէս պատ-
րաստութիւններ տեսնելով, պաշտօնապէս ընդունեց հօֆ
պէյր իր հետևորդներուն հետ, Կուսակալին և հօֆ պէյրի
կողմէ գրաւոր ճառեր կարդացուեցան. Յետոյ հօֆ պէյր
հետևորդներով գնաց Առաջնորդարան ուր խոնուած բաղ-
մութիւն մը ծափահարութեամբ ընդունեց զինքը. հոն կէս
ժամուան չափ մնաց. Ազգ. Գաւառական ժողովի ատենա-